Ապրիլը YIC-ի հետ

2013 # 3

Բացահայտիր Ինքդ Քեզ - Կերտիր Քո Ապագան

2013թ.-ի հունվարին «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ -ն մեկնարկեց «Կերտիր քո ապագան» երկարաժամկետ ծրագիրը, որի նպատակն է նպաստել կազմակերպության առավել ակտիվ անդամների անհատական և մասնագիտական զարգացմանը:

«Կերտիր քո ապագան» ծրագրի շրջանակներում անհատական և խմբային հանդիպումների անցկացումը և առցանց խմբերի ստեղծումը առանձնահատուկ միջոց են՝ ներգրավելու մի շարք երիտասարդների, ովքեր զանազան նոր հնարքներ, մեթոդներ սովորելու միջոցով կկարողանան ինքնուրույն «կերտել» իրենց ապագան:

Մրցութային կարգով ընտրված ինը մասնակիցները, անհատական զարգացման նախագծեր մշակելով, դասընթացների, գործավարժանքների միջոցով փորձում են կյանքի կոչել իրենց գաղափարներն ու նախաձեռնությունները:

Ծրագրի իրականացման պարտականությունը ստանձնել է ԵՆԿ ՀԿ միջազգային խորհրդի նախագահ և միջազգային դասավանդող Աննա Եղոյանը, ով փորձում է յուրաքանչյուր հանդիպմանը հաղորդել նոր շունչ, եզակիություն ու բացառիկություն: Արդյուքում հնարավոր է լինում ոգևորել երիտասարդներին, խրախուսել նրանց՝ կյանքին և շրջապատող իրականությանը նայել այլ կողմերից, աջակցել մի շարք ոլորտներում փոփոխություններ կատարելու նրանց ջանքերին:

Չնայած ծրագիրը դեռ ավարտին չի մոտեցել, մասնակիցներն արդեն իսկ շատ ոգևորված են այն դրական փոփոխություններով, որոնք նկատել են այս մի քանի ամիսների ընթացքում: Միմյանց հետ շփման արդյունքում մասնակիցները ստացել են այնպիսի գիտելիքներ և հմտություններ, որոնք նպաստել են ոչ միայն իրենց մասնագիտական, այլև նաև անհատական զարգացմանը: Մասնակիցներն իրենց գլխավոր ձեռքբերումներից են համարում ժամանակն արդյունավետ պլանավորելու հմտության զարգացումը, ինքնադրսևորման և ինքնարտահայտման նոր միջոցները, նպատակներին հասնելու մեջ ավելի հաստատուն կամքը, ապագա քայլերի մեջ արագ կողմնորոշումը:

Խմբում տիրող ջերմ միջավայրը, անկեղծ զրույցներն ու քննարկումները դրական արձագանք են ունեցել մասնակիցներից յուրաքանչյուրի վրա, փոխվել են մասնակիցների աշխարհայացքը, ապագայի պատկերացումները:

Այս ծրագրի շնորհիվ յուրաքանչյուր մասնակիցն արդեն տեսնում է իր կերտելիք ապագան և իր նոր «ԵՍ»-ը:

Գայանե Առաքելյան՝ «Կերտիր քո ապագան» ծրագրի մասնակից

Առաջիկա ամսվա ակումբները

Երկուշաբթի.

15:00 – Ռուսերենի ակումբ
(Գագիկ Գրիգորյան)

16:00 – Անգլերենի ակումբ/ միջին մակարդակ
(Վոլոդյա Խաչատրյան)

17:00 – Անգլերենի խոսակցական ակումբ
(Քիմ ՎանՔիրք)

Երեքշաբթի.

16:00 – Անգլերենի ակումբ / միջին մակարդակ
(Վոլոդյա Խաչատրյան)

17:00 – Իսպաներենի ակումբ
(Յուստինա Պասկար)

Չորեքշաբթի.

16:00 – Պորտուգալերենի կումբ
(Լուիշ Կարվալո)

16:00 – Լուսանկարչություն ակումբ
(Լուիշ Կարվալո)

17:30 – Անգլերենի ակումբ սկսնակների համար
(Սիրանուշ Մինասյան)

Հինգշաբթի.

15:00 – Եվրոպական ակումբ
(ԵԿԾ կամավորները)

15:00 – Եվրամիության (ԵՄ) ակումբ (EyoU Club)
(Ալեկսանդրա Զիեբա և Վիկտորիա Վալտեր – յուրաքանչյուր ամսվա վերջին հինգշաբթի օրը)

16:00 – Վրացերենի ակումբ
(Արման Մելքոնյան)

17:00 – Գերմաներենի ակումբ
(Աննա Շոթթ և Յոհաննա Թոյբլեր)

Ուրբաթ.

14:00 – Լեհերենի ակումբ
(Ալեկսանդրա Զիեբա)

15:00 – Պարսկերենի ակումբ
(Գայլա Հովհաննիսյան)

Մանրամասների համար:
https://www.facebook.com/
www.yic.am

Խաղաղության 11-րդ միջազգային հանդիպում

Ֆրանսիայի Վեռդուն քաղաքում ապրիլի 14-ից 22-ը տեղի ունեցավ «Խաղաղության 11-րդ միջազգային հանդիպումը», որը կազմակերպել էր «Խաղաղության համաշխարհային կենտրոն»-ը: Երիտասարդների փոխանակման այս ծրագրին հրավիրված էին մասնակցելու երիտասարդներ Ուկրաինայից, Թուրքիայից, Հայաստանից, Գերմանիայից և Ֆրանսիայից:

Հայաստանում ծրագրի համակարգումն իրականացնում էր Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն: Կազմակերպության կողմից բաց մրցույթի արդյունքում ընտրվեցին ծրագրի 5 մասնակիցներ՝ հաշվի առնելով դիմորդների լեզվական հմտությունները, մասնակցության շարժառիթը, քաղաքացիական ակտիվությունը և բնակության վայրի աշխարհագրական դիրքը (առաջնայնություն է տրվել մարզաբնակ երիտասարդներին): Բացի այդ պահպանվել էր թիմի գենդերային բալանսը և մինչև 25 տարի տարիքային սահմանափանը, որը Եվրամիության «Երիտասարդությունը Շարժման Մեջ» ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր երիտասարդական փոխանակումների համար պարտադիր պայման է:

Հանդիպման նպատակն էր համախմբել և ներառել համատեղ աշխատանքի մեջ երիտասարդների, ովքեր ծագում են այնպիսի երկրներից, որոնք ունեցել են կոնֆլիկտ կամ մինչև այսօր գտնվում են կոնֆլիկտային իրադրության մեջ:

Ֆրանսիական և գերմանական խմբերը հրավիրվել էին, որպես հաշտության և համերաշխ կողք-կողքի ապրելու օրինակ, նույնիսկ այնպիսի լուրջ կոնֆլիկտից հետո, ինչպիսին է Առաջին համաշխարհային պատերազմը:

Մասնակիցները հնարավորություն ունեցան զգալու պատերազմի սարսուռը, երբ այցելեցին Les Eparges (Լեզ Էպարժը), վայր, որտեղ տեղի էր ունեցել «ականներով պատերազմը» 1916-1918թթ., Douaumont (Դուումոն) հուշահամալիրը (պատերազմի դաշտի մոտ գտնվող գերեզմանատունը):

Դերային խաղի միջոցով երիտասարդները խորացրեցին իրենց գիտելիքները Եվրամիության և նրա կառուցվածքի մասին:

Հանդիպման ընթացքում մեծ տեղ էր հատկացված միջմշակութային շփմանը: ֆրանսիական մշակույթին ավելի խորը ծանոթանալու համար երիտասարդներին հյուրընկալել էին իրենց ընտանիքներում տեղի բնակիչները, ինչը հնարավորություն էր տալիս նաև զարգացնելու լեզվական հմտությունները:

Մշակութային երեկոների ընթացքում մասնակիցները ներկայացրեցին իրենց ազգային խոհանոցը, պարերը, ազգային տարազներն ու սովորույթները:

Քաղաքին ծանոթանալու նպատակով կազմակերվեց խմբային զբոսանք, որն էլ ավարտվեց կենտրոնական կառամատույցում իրականացված ֆլեշմոբ-ով:

Մանակիցներին հնարավորություն ընձեռնվեց մի ամբողջ օր անցկացնել արվեստների և նորաձևության մայրաքաղաք Փարիզում, այցելել ժամանակակից արվեստների թանգարանը, զբոսնել զբոսանավով և ծանոթանալ Փարիզի տեսարժան վայրերին:

Այս ծրագիրը հնարավորություն տվեց երիտասարդներին կտրվել իրենց շրջապատում առկա կարծրատիպերից, մասնակցություն ցուցաբերել, արտահայտել սեփական կարծիքն ու զգացմունքները, բացվել դիմացինի հանդեպ, ձեռք բերել ընկերներ ու դառնալ բարեկամներ՝ անտեսելով փակ սահմանները:

Հեղուշ Խաչատրյան, փոխանակման ծրագրի մասնակից

Լեհաստանից Ալեքսանդրա

«Վերջապես ու՞ր ես գնում: Ալբանիա՞: Անդորա՞: Ա.... »,_ հարցնում էին իմ ընկերներից շատերը՝ անտեղյակ լինելով, թե ինչու և ուր եմ գնում կամավորական ծառայության: Իսկ ես միշտ ասում էի՝ Հայաստան: Ճիշտն ասած, ես ևս վստահ չէի, թե ուր եմ գնում և ինչ է սպասվում ինձ: Հայաստանի մասին ես գիտեի և անգամ ծանոթ էի Եվրոպական Կամավորական Ծառայությանը որոշ հոդվածներից և ուղեցույցներից, և իմ ակնկալիքների հետ կապված, բարեբախտաբար, այդ աղբյուրներից և ոչ մեկում չկային որևէ բացասական բան: Անհանգստացնող էր միայն այն, որ հազարավոր կիլոմետրեր հեռու եմ լինելու տանից և այն, որ ընկերներս այդքան էլ կողմ չէին Հայաստանում ութ ամիս անցկացնելու իմ որոշմանը:

Եվ ահա արդեն ութ ամիս է, ինչ ես Հայաստանում եմ, Գյումրիում և դեռ զարմացած եմ, թե ինչպես կարողացա դիմակայել ցուրտ ձմեռան օրերը, սովորել կարդալ և գրել հայերեն և ընտլանալ աշխատանքային մթնոլորտին: Դա իհարկե երկար գործընթաց էր՝ սկսած ամենառաջին իսկ օրվանից, երբ ժամանեցի Հայաստան 2012 թվականի Հոկտեմբերի 6-ին:

Այստեղի իմ կամավորական կյանքը լի է եղել միանգամայն նոր փորձություններով: Իմ աշխատանքային գործունեությունը հիմնականում ուղղված է ուսումնասիրելու մշակութային խնդիրները: Մյուս կամավորների հետ միասին ես նաև մասնակցում եմ ԵՆԿ ՀԿ-ում Եվրոպական ակումբի կազմակերպմանը, աշխատում եմ մանկատանը, կազմակերպում տարբեր հանրային միջոցառումներ և կյանքի կոչում մեր սեփական նախաձեռնությունները: Օրինակ՝ ես և պորրուգալացի կամավոր Լուիսը ԵՆԿ ՀԿ-ում մարտ ամսին կազմակերպեցինք «Կանանց շաբաթ» միջոցառումը: Այս միջոցառումը իրականացնելիս մենք համագործակցեցինք Գյումրիի և Երևանի ԵԿԾ կամավորների և տեղական կամավորների հետ, ինչպես նաև «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (ՀՏԳԿ) հասարակական կազմակերպության հետ: Այդ շաբաթվա ընթացքում մենք կազմակերպեցինք ֆիլմերի ցուցադրություն, ֆրանսիական բոքսի դասընթաց, իսկ ՀՏԳԿ ՀԿ-ի ներկայացուցիչը անցկացրեց գենդերային հավասարության վերաբերյալ դասընթաց:

Ուրբաթ օրերին ես նաև օգնում եմ «Լեհական խոհանոց» ակումբին, որին անմիջապես հաջորդում է Ուրբաթօրյա սրճարանը: Վերջին «Լեհական խոհանոց» ակումբի շրջանակներում մենք կարողացանք պատրաստել հարյուր կարտոֆիլով և կաթնաշոռով կարկանդակներ: ԵՆԿ ՀԿ-ից բացի ես համագործակցում եմ Գյումրիի 58 թաղամասում գտնվող լեհական համայնքի հետ՝ օգնելով երեխաներին բարելավելու լեհերենի գիտելիքները: Իմ երկիրի մշակույթը տարածելու համար հունիս ամսվա սկզբին պատրաստվում եմ անցկացնել միջոցառում ԵՆԿ ՀԿ-ի և Լեհական համայնքի հետ միասին:

Քանի որ ավարտին է մոտենում իմ ԵԿԾ աշխատանքը Հայաստանում, սկսում եմ գնահատել և վերլուծել այստեղ անցկացրած իմ ամիսները: Անշուշտ, սա հնարավորություն տվեց ինձ ընդլայնելու իմ աշխարհայացքը՝ անցնելով հաջողությունների և ձախողումների միջով, զարգացնել անձնական և մասնագիտական հմտություններ և, իհարկե, բացահայտել ամենագեղեցիկ վայրերից մեկը աշխարհում: Սա ոչ թե նախադասություն է կամավորների ուղեցույցի, այլ այն, ինչ պատահել է ինձ հետ: Չեմ կարող համարել իմ առաքելությունը Հայաստանում ավարտված: Երկիր, որը տաս անգամ փոքր է, քան Լեհաստանը դեռ կան այնքան շատ բաներ, որոնք դեռ չեմ հասցրել բացահայտել:

Ալեքսանդրա, ԵԿԾ կամավոր

Գունավորենք քաղաքը

Դուք նույնպե՞ս կարծում եք, որ Գյումրին գեղեցիկ քաղաք է, բայց գույների կարիք ունի: Եթե այդպես է, ուրեմն դուք հենց այն մարդն եք, ով կարող է միանալ «Գունավորե՛նք քաղաքը» նախագծին:

ԵՆԿ ՀԿ-ի կամավորները Կարիտասի «Փոքրիկ իշխան» կենտրոնի երեխաների հետ պատրաստվում են զարդարելու քաղաքի կենտրոնը գույներով: Մայիս ամսվա ընթացքում մենք գունավոր թելերով գործելու ենք ցանցանամ շապիկներ՝ դրանք ծառերի վրա փաթաթելու և քաղաքին գունավոր տեսք հաղորդելու համար: Այս տեսակի գործողությունը հայտնի Եվրոպայում և կոչվում է «Քաղաքային գործվածք» (հետևեք հղմանը մանրամասն տեղեկատվության և աշխարհի տարբեր ծայրերից օրինակ-նկարների համար http://www.facebook.com/media/set/?set=a.636838396343781.1073741936.334148986612725&type=1

Մենք ուրախ կլինենք ձեր աջակցության համար: Միացեք և գործեք մեզ հետ մայիս ամսվա ընթացքում կամ միացեք մեր հանրային միջոցառմանը հունիսի 1-ին՝ դրամատիկական թատրոնի շենքի դիմաց:

Մանրամասների համար կարող եք գրել nele.tast@gmail.com էլ. հասցեով կամ այցելել ԵՆԿ ՀԿ գրասենյակ՝ Ջիվանի 71 /Պոլոզ Մուկուչ գինետան հարևանությամբ/: Գունավորե՛ք քաղաքը մեզ հետ:

Նելե, ԵԿԾ կամավոր

ԵԿԾ ուղարկված կամավոր

Սյուզաննան՝ Գերմանիայում

Ողջույն! Ես Սյուզաննան եմ և կատարում եմ Եվրոպական Կամավորական Ծառայությունը (ԵԿԾ) Գերմանիայում:

Արդեն երեք ամիս է, ինչ այստեղ եմ՝ երեք երկար ամիսներ՝ լի հաջողություններով և անհաջողություններով: Երբեմն, երբ հետադարձ հայացք եմ գցում, թվում է թե դեռ երեկ եմ եկել Գերմանիա, բայց լինում են նաև օրեր, երբ թվում է թե այստեղ ապրել եմ շատ երկար ժամանակ: Երեք ամիսը այդքան էլ երկար ժամանակ չէ, բայց այս ամիսները ուսուցողական էին, և սովորեցի այն, ինչ վստահ եմ՝ երբեք չեի սովորի ոչ մի գրքից կամ որևէ ինստիտուտում:

Ծրագիրը, որով աշխատում եմ, երեխաների համար է և կապված է մշակույթի, երաժշտության, թատրոնի և կրթության հետ: Այս ծրագրով արդեն երկու ամիս է անցկավցնում եմ արհեստների ակումբ: Նշեմ, որ մինչ կամավորական ծառայության գալս ես շատ քիչ գիտեի արհեստների մասին, բայց հիմա վստահ կարող եմ ասել, որ արդեն բավականին հմուտ եմ: Իսկ վերջերս սկսել եմ Անգլերեն լեզվի ակումբը և զարգացնում եմ օտար լեզվի դասավանդման ինտերակտիվ մեթոդներ: Դասերին նախապատրաստվելիս փորձում եմ լինել նորարար, և ամբողջ դասապրոցեսը ընթանում է բավականին հետաքրքիր: Իմ զբաղվածությունը չի սահմանափակվում այսքանով, քանի որ մասնակցում եմ անգլերենից ռուսերեն սովորելու դասընթացին՝ դասավանդելով երկու ռուս ուսանողների ռուսերեն, իսկ նրանք էլ օգնում են ինձ հմտանալու գերմաներենի մեջ:

Ես նաև փորձում եմ հնարավորինս շատ ճամփորդել՝ բացահայտելով նոր երկրներ և մշակույթներ:

Իհարկե եղել են նաև դժվարություններ, ինչպիսին էին մշակութային շոկը: Մինչ այստեղ գալը, ես այդ մասին գիտեի տեսականորեն և վստահ էի, որ դրա միջով չեի անցնի: Առաջին իսկ օրվանից ես հաճախ ասում էի, որ չեմ զգում այսպես կոչված մշակութային շոկը: Բայց ինչպես արդեն նշեցի, այս երեք ամիսները լի էին հաջողություններով և անհաջողություններով, իսկ դա պայմանավորված էր մշակութային շոկով:

Այս ամենի միջով անցնելով՝ բացահայտում ես շատ բաներ ինքդ քո մասին, գնահատում ես քո սեփական մշակույթը և գնահատում այն ավելի շատ: Ուրախ եմ, որ կարողացա հաղթահարել դա, և հիմա արդեն ճիշտ պահն է վայելելու իմ ծրագիրը և Գերմանիայում անցկացվելիք ժամանակս:

Կարծում եմ, կամավորական ծառայության գալը խոհեմ որոշում էր. թողնում ես քեզ ծանոթ միջավայրը և պատրաստվում նոր փորձությունների: Մինչ կամավորության գալը, յուրաքանչյուր կամավոր պետք է գիտակցի սովորելու իր պատասխանատվությունը, քանի որ այն կարող է լինել շրջադարձային ուսուցողական քայլ ԵԿԾ ծառայության ընթացքում:

Սյուզաննա Գալստյան, ԵԿԾ կամավոր

Կոնտակտային տվյալներ

Հասցե: Ջիվանի , Գյումրի 3107, Հայաստան
Հեռ.: (+374) 312 6 94 97
Էլ-հասցե: newsletter@yic.am
Վեբ-կայք: www.yic.am